# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2024/04 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

**ք. Երևան** **02.07.2024թ.**
**ժամը 17:00**

2024 թվականի հուլիսի 2-ին, ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, հասցեում գտնվող «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամում տեղի ունեցավ **ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2024/04** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Նարեկ Մկրտչյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի խորհրդական |

Հանձնաժողովի անդամներ՝

| | |
|---|---|
| Անուշ Հայրապետյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ներքին վերահսկողության պատասխանատու |
| Հրայր Դավթյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի ադմինիստրատիվ բաժնի տնտեսական գծով մասնագետ |
| Գոհար Մեսրոպյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման բաժնի Ֆինանսական կառավարման և հաշվապահական հաշվառման մասնագետ |
| Գարիկ Նահապետյան | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի օգնական |

Հանձնաժողովի քարտուղար՝

| | |
|---|---|
| Արմինե Շալունց | «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գնումների բաժնի մասնագետ |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Մկրտչյանը: Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման առաջին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման անհնարինության, համակարգի տեխնիկական խնդիրների մասին:

4. Հանձնաժողովի որոշման մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում կատարված հարցումների, պարզաբանումների հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

2.1 Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2.2. Գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

2.3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

2.4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. Տվյալներ ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի բացման, համակարգի տեխնիկական խնդիրների մասին

3.1. Ընթացակրգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 02.07.2024թ. ժամը 17:00-ին՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

3.2. 02.07.2024թ. ժամը 17:00-ի դրությամբ ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2024/04 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացող անդամների մոտ ստացված հայտերի ցուցակը ներկայացնելու առաջադրանքը բացակայում էր, իսկ ընթացակարգի կարգավիճակը հանձնաժողովի բոլոր անդամների մոտ դեռևս «**հայտերի ներկայացում**» էր: Armeps.am համակարգի հայտեր բաժնից ppcm տանող հղման մեջ բացակայում էր ՃԴ-ԳՀԱՊՁԲ-

2024/04 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ներառյալ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Հանձնաժողովի որոշման մասին

4.1. Հաշվի առնելով վերը նշվածը՝ հանձնաժողովը որոշեց ՃԴ-ԳՀԱՊՁԲ-2024/04 ծածկագրով գնման ընթացակարգը լուծարել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Ն. Մկրտչյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | | Ա. Հայրապետյան |
| | | Հ. Դավթյան |
| | | Գ. Մեսրոպյան |
| | | Գ. Նահապետյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | | Ա. Շալունց |

# Протокол N 2

## Заседания по вскрытию и оценке заявок процедуры под кодом CHD-GHAPDzB-2024/04

**г. Ереван** **02.07.2024г.**
**17:00**

2-ого июля 2024 года в Фонде «Дорожный департамент», находящегося по адресу: РА, г.Ереван, Площадь Республики, Правительственный дом 3, состоялось заседание оценочной комиссии (далее-Комиссия) процедуры под кодом **CHD-GHAPDzB-2024/04** (далее-Процедура). В заседании участвовали члены комиссии в следующем составе:

Председатель Комиссии:

| | |
|---|---|
| Нарек Мкртчян | Советник исполнительного директора фонда «Дорожный департамент» |

Члены комиссии:

| | |
|---|---|
| Ануш Айрапетян | Ответственный за внутренний контроль фонда «Дорожный департамент» |
| Грайр Давтян | Специалист по хозяйственной части административного отдела Фонда «Дорожный департамент» |
| Гоар Месропян | Старший специалист финансового управлени и бухгалтерского учета отдела финансового управлени и бухгалтерского учета Фонда «Дорожной Департамент» |
| Гарик Наапетян | Помощник исполнительного директора фонда «Дорожный департамент» |

Секретарь комиссии:

| | |
|---|---|
| Армине Шалунц | Специалист по закупкам отдела закупок фонда «Дорожный департамент» |

Заседание комиссии, проходило под председательством Н. Мкртчяна. Принимая во внимание, что состав Комиссии, в соответствии установленными требованиями и правилом 26(2) Регламента N 526-Н от 04 мая 2017 года, заседание комиссии было признано правомочным и было объявлено открытым.

### 1. Об утверждении повестки заседания комиссии

Комиссия решила утвердить следующую повестку заседания Комиссии:

1. Об утверждении повестки заседания Комиссии.
2. О запросах, разъяснениях, изменениях приглашения, незаконных действиях и жалобах.
3. О невозможности открытии, о технических проблемах в системе.
4. О решении комиссии.

Принято решение: за - 5, против - 0.

## 2. О запросах, разъяснениях, изменениях приглашения, незаконных действиях и жалобах

Комиссия протоколировала что:

2.1. В рамках Процедуры закупок в приглашении не были внесены изменения.

2.2. В рамках Процедуры закупок запросов с требованием разъяснений приглашения не было.

2.3. В рамках Процедуры закупок незаконных действий не было.

2.4. Жалоб о Процедуре закупки не было получено, и никаких решений не было принято.

Принято решение: за - 5, против - 0.

## 3. О невозможности открытии, о технических проблемах в системе.

3.1. Крайний срок подачи заявок был установлен 02.07.2024. в 17:00, посредством системы электронных закупок Armeps (www.armeps.am).

3.2. В 07.02.2024 по состоянию на 17:00 задача о представлении списка поступивших заявок членам Комиссии по открытию процедуры закупки с кодом CHD-GHAPDzB-2024/04 отсутствовала, а статус процедуры по-прежнему оставался «подача заявок» для всех членов Комиссии. В Armeps.am в ссылке, ведущей из раздела «системные заявки» в ppcm отсутствовала информация о процедуре закупки под кодом CHD-GHAPDzB-2024/04, так же отсутствовали заявки, представленные участниками процедуры.

Принято решение: за - 5, против - 0.

## 4. О решении комиссии

4.1. Учитывая изложенное, комиссией принято решение о ликвидации процедуры закупки под кодом CHD-GHAPDzB-2024/04.

Принято решение: за - 5, против - 0.

| | | |
|---|---|---|
| Председатель комиссии: | /следует подпись/ | Н. Мкртчян |
| Члены комиссии: | /следует подпись/ | А. Айрапетян |
| | /следует подпись/ | Г. Давтян |
| | /следует подпись/ | Г. Месропян |
| | /следует подпись/ | Г. Наапетян |
| Секретарь комиссии: | /следует подпись/ | А. Шалунц |